# ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

## ՓՐԿՉԻ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ ԵՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

### ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

«Քրիստոս յարեա՜ւ ի մեռելոց»:

Փրկչի հրաշափառ Հարության մեծ ավետիսով ողջունում ենք ձեզ, Մայր Աթոռի միաբանությունը և համայն հայ հավատացյալ ժողովուրդը, ամենաջերմ մաղթանքով առ Աստված՝ Ս. Էջմիածնի անսասանության, հայ ժողովրդի ու վերածնած Մայր Հայրենիքի խաղաղության և բարօրության համար:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ՝
Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ՓԱՐԻԶ

---

### ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ՓԱՐԻԶ

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, Մայր Աթոռի միաբանությունը և աշխատակիցները սրտի անհուն բերկրանքով շնորհավորում են Ձերդ Վեհափառության Քրիստոսի հրաշափառ Հարության տոնի առթիվ:

«Քրիստոս յարեա՜ւ ի մեռելոց»:

Մաղթում ենք արևշատություն, առողջություն և բարի վերադարձ Մայր Աթոռ: Շնորհավորանքներ Սփյուռքի հայ համայնքին և Ձերդ Վեհափառության ուղեկիցներին:

Գերագույն Հոգևոր Խորհրդի Նախագահող՝
ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԷՋՄԻԱԾԻՆ